

Կարեն Ամիրյան

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, ի.գ.թ., Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱՆՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ¹

Համառոտագիր

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հետ կապված մի շարք հարցեր: Հոդվածում անդրադարձ է կատարվում 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 39-րդ գլուխներով նախատեսված գույքի արգելադրման նյութական հիմքի և դատավարական ընթացակարգի հետ կապված մի շարք կարգավորումների, որոնք տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում: Այսինքն՝ հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել այնպիսի խնդիրներ, որոնք առաջացել են իրավակիրառ պրակտիկայում: Այս առումով հոդվածը նաև արդիական է, քանի որ ներկայացվող մոտեցումները կարող են հետաքրքրություն ներկայացնել ինչպես ուսանողների, այնպես էլ փաստաբանների, իրավապահ մարմինների աշխատակիցների և դատավորների մոտ:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի պայմաններում արգելադրված գույքը ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում արգելանքից հանելը, գույքի արգելադրման որոշմամբ այդ գույքի բավարար արժեքի մասին նշում կատարելը:

Հոդվածի 1-ին մասը նվիրված է ենթադրյալ հանցավոր ծագում ունեցող գույքն իրեղեն ապացույց ճանաչելու որոշումների իրավաչափության հետ կապված մի շարք խնդիրների, որոնք հանդիպում են իրավակիրառ պրակտիկայում (*հոդվածի 1-ին մասը իրապարակվելու է «Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն» հանդեսում*):

Հիմնաբառեր – սեփականության իրավունք, սեփականության իրավունքի

¹ Հոդվածը ներկայացվել է 29.03.2024 թ., գրախոսվել է 10.06.2024 թ.:

սահմանափակում, դատական երաշխիքներ, գույքի արգելադրում, գույքի արգելադրման վերացում, արգելադրման ենթակա գույքի արժեքի որոշում:

Ներածություն

Թեմայի արդիականությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պրակտիկայում հաճախ առաջանում են խնդիրներ սեփականության իրավունքի սահմանափակման քրեադատավարական կարգավորումների ընկալման և մեկնաբանման շուրջ, որպիսի պայմաններում սույն աշխատանքում մեր առջև դրված խնդիր է պարզաբանել որոշ հիմնահարցեր, և նպատակ ենք հետապնդում այդ ճանապարհով որոշակի լուծումներ առաջարկել՝ նպաստելու միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի պայմաններում արգելադրված գույքը ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում արգելանքից հանելը, գույքի արգելադրման որոշմամբ այդ գույքի բավարար արժեքի մասին նշում կատարելը:

Նշյալ հարցերի շրջանակն էլ կազմում է սույն աշխատանքի առարկան, որի մեթոդաբանական հիմքն են կազմում այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, ձևական-տրամաբանականը:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 39-րդ գլուխները կարգավորում են գույքի արգելադրման նյութական հիմքի և դատավարական ընթացակարգի հետ կապված հարաբերությունները: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կարգավորումներն էապես տարբերվում են ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի համարժեք կարգավորումներից, ինչն էլ իրավակիրառ պրակտիկայում որոշ դեպքերում հանգեցնում է նոր կարգավորումների ոչ համարժեք ընկալման և կիրառման:

Սույն աշխատանքը նպատակ է հետապնդում ներկայացնել այդպիսի մի քանի իրավիճակներ, որոնք առավել հաճախ հանդիպում են պրակտիկայում, և առկա իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանման միջոցով առաջարկել լուծումներ, որոնք կարող են ունենալ ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ նշանակություն: Այսպես.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն²

«Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

² ՀՀ Սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրումը ենթակա է պարտադիր դատական ստուգման»³:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

«Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությանը պատճառված հնարավոր վնասի կամ վարույթային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:

Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) սպացույցների գերակշռությանը հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ,

2) սպացույցների գերակշռությանը հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց,

3) սպացույցների գերակշռությանը հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված սահմանափակ գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ,

4) սպացույցների գերակշռությանը հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է,

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտար-վել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

6) Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացառապայության դեպքում կարող է արգելադրվել դրան համարժեք գույք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը:

Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար գույքային

³ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին, ՀՕ-306-Ն <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189479> (վերջին մուտք՝ 17.12.2023 թ.):

պատասխանատվություն կրող անձանցից յուրաքանչյուրի՝ արգելադրման ենթակա գույքի բաժինը որոշելիս վարույթն իրականացնող մարմինը հաշվի է առնում ենթադրյալ հանցագործությանը մեղադրյալներից յուրաքանչյուրի դերը և մասնակցության աստիճանը:

Արգելադրման ենթակա չէ՝

1) այն գույքը, որի վրա, օրենքի համաձայն, չի կարող բռնագանձում կամ բռնագրավում տարածվել,

2) իրեն են սպացույց ճանաչված գույքը»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»⁴:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները՝ նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չարիազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ (տե՛ս Borzhonov

⁴ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա՝ ընդունված 1950 թվականին:

v. *Russia* գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60)⁵:

Վճռաբեկ դատարանը, Ա. Հայրապետյանի գործով անդրադառնալով սեփականության իրավունքի եռությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) *Գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման` սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հսկակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն (...)*»⁶:

Վճռաբեկ դատարանն Ա. Մեկոյանի վերաբերյալ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0185/11/11 որոշմամբ արձանագրել է, որ. «(...) *[Կ]անխարզելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը:*

Իր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու` անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի` իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն: (...)»⁷:

Վերոգրյալ իրավանորմների, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն աշխատանքում քննարկման առարկա են դարձել հետևյալ հարցերը.

1. Առաջին հարցը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի պայմաններում արգելադրված գույքն արգելանքից հանելու իրավական ընթացակարգին ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատարանը քննում է՝

1) գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդությունը.

2) գույքի արգելադրումը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը»:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Borzhonov v. *Russia* գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ա. Հայրապետյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԳ/0001/11/10 որոշումը:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ա. Մեկոյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0185/11/11 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Արգելադրված գույքի սեփականատերը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձը կամ նրանց ներկայացուցիչը իրավունք ունեն մինչդատական վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս հետո: Միջնորդության պատճենն ուղարկվում է մինչդատական վարույթն իրականացնող քննիչին և հսկող դատախազին:

2. Դատարանը մերժում է միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը, եթե միջնորդությունը ներկայացվել է ոչ պատշաճ անձի կողմից կամ ոչ պատշաճ ժամկետում, կամ եթե դրանում չեն ներկայացվել գույքի արգելադրման իրավաչափությունը վիճարկող նոր էական փաստարկներ: Հակառակ դեպքում դատարանը միջնորդության հիման վրա հարուցում է վարույթ՝ որոշման մեջ նշելով այն գրավոր, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին: Վարույթը բանավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում դատական նիստը նշանակվում է յոթնօրյա ժամկետում»:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքներում նախատեսել է երկու առանձին և իրարից էականորեն տարբերվող իրավական ընթացակարգեր՝ **գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափության հաստատմանն ուղղված կառուցակարգ և օրենսդրությամբ նախատեսված իրավասու անձանց նախաձեռնությամբ գույքի արգելադրումը վերացնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու միջոցով սեփականության իրավունքի սահմանափակման հարցը դատարանի կողմից քննարկման ու գնահատման առարկա դարձնելու ընթացակարգ:**

Օրենսդրությամբ նախատեսված իրավասու անձանց նախաձեռնությամբ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական ստուգման ընթացակարգի համաձայն՝ արգելադրված գույքի սեփականատերը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձը կամ նրանց ներկայացուցիչը իրավունք ունեն մինչդատական վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս հետո (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի 2-րդ մասը սպառնիչ կերպով սահմանում է այն դեպքերը, երբ վերոնշյալ ընթացակարգով ներկայացված միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը պետք է մերժվի, մասնավորապես՝

- միջնորդությունը ներկայացվել է ոչ պատշաճ անձի կողմից,
- միջնորդությունը ներկայացվել է ոչ պատշաճ ժամկետում,

- միջնորդությամբ չեն ներկայացվել գույքի արգելադրման իրավաչափությունը վիճարկող նոր էական փաստարկներ:

Հարկ է փաստել նաև, որ միջնորդությունը պետք է ներկայացվի ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս հետո:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ կողմի ներկայացրած միջնորդությունը դատարանը մերժում է այն պատճառաբանությամբ, որ այդ միջնորդությունը չի կարող քննարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Նման եզրահանգմամբ դատարանն անտեսում է այն հանգամանքը, որ քննարկվող դեպքում խոսքը վերաբերում է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով կայացված որոշման իրավաչափության վիճարկմանը:

Հարկ է նշել, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով կայացված՝ գույքի վրա կալանք դնելու որոշման իրավաչափության վիճարկման համար 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հատուկ կարգավորումներ չի նախատեսել, ինչն օրենսդրի նպատակահարմարության տիրույթում է: Միաժամանակ, նման հատուկ ընթացակարգ նախատեսված չլինելը չի կարող անձին զրկել սեփականության իրավունքի պաշտպանության իր հիմնարար իրավունքից: Անկախ այն հանգամանքից, թե օրենսդրական ինչպիսի փոփոխություններ են կատարվել՝ իրավական պետությունում անձը պետք է հնարավորություն ունենա գույքի վրա կալանք դնելու որոշումը դատական բողոքարկման առարկա դարձնել: Այլ կերպ ասած՝ այն պայմաններում, երբ գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշումը 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հնարավոր էր արտադատական կարգը պահպանելով վիճարկել նաև դատարանում, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ գույքի արգելադրման ինստիտուտի մասով օրենսդրի մոտեցման հայեցակարգային փոփոխության բացասական հետևանքը չի կարող կրել անձը: Նման մոտեցումը չի բխի ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի բովանդակությունից, քանի որ կվտանգի սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի էության անխախտելիության գաղափարը:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշում է կայացվել, ապա այդ որոշումը պետք

Է բողոքարկման ենթակա լինի նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Ինչ վերաբերում է բողոքարկման իրավունքի իրացման կառուցակարգին, ապա գտնում ենք, որ այդպիսի որոշումը կարող է բողոքարկվել 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքներ) կամ 294-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքներ) շրջանակներում:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքներ) շրջանակում բողոքարկման դեպքում անձը ոչ միայն մինչև դատարան բողոքարկելը պետք է սպառի արտադատական ընթացակարգերը, այլև դրանք սպառելուց հետո դատարան բողոքարկելիս պետք է փորձի հաղթահարել նշյալ 299-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդրական պահանջները:

Հաշվի առնելով նշյալ ընթացակարգի իրացման ինչպես ժամանակային գործոնը, այնպես էլ՝ իրավասահմանափակող կարգավորումների քանակն ու դրանցում առկա բովանդակային պահանջները և նկատի ունենալով այդ հիմքով բողոքարկման դեպքում դատարանի որոշակի հայեցողության առկայությունը՝ գտնում ենք, որ այն չի կարող լինել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման վիճարկման միակ իրավական հնարավորությունը:

Գտնում ենք նաև, որ սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ունեն այլ բովանդակություն և դրանց գործադրման այլ ընթացակարգեր, ինչը, սակայն, չի կարող խոչընդոտել մինչդատական վարություն գույքի վրա դրված կալանքի իրավաչափության դատական ստուգման այս ընթացակարգը գործադրելու համար:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքներ) շրջանակում բողոքարկման իրավունքի բացակայության հիմնավորմամբ վարույթի հարուցումը մերժելը (այսինքն, երբ 2021

թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ու 298-րդ հոդվածի ոչ կիրառելի լինելու վկայակոչմամբ մերժվում է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման դատական ստուգման ենթարկելու նպատակով վարույթ հարուցելը) հանգեցնում է սեփականության իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի իրացման արգելակման, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված այն պահանջներից, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, և հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

2. Երկրորդ հարցը վերաբերում է գույքի արգելադրման որոշմամբ այդ գույքի բավարար արժեքի մասին նշում կատարելու պարտականությանը: Այսպես.

Վճռաբեկ դատարանը Ս. Մայրապետյանի վերաբերյալ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0587/11/18 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքի համաչափ տահնանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչն իր հերթին պետք է հիմնավորված լինի այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակներով, լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման մեջ նշվում են արգելադրման ենթակա գույքը, դրա սեփականատերը և տիրապետողը, գույքի գտնվելու վայրը, **ինչպես նաև գույքի այն արժեքը, որը բավարար է արգելադրման նպատակն ապահովելու համար:**

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ մեղադրյալից հնարավոր բռնագրավման ենթակա է պայմանական մեկ միլիոն ՀՀ դրամ գումար, սակայն քննիչն արգելադրել է մեղադրյալին պատկանող 5 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքն ամբողջությամբ: Ընդ որում, նման դեպքերում գույքի արգելադրման որոշման «Որոշեց» հատվածում առկա չի լինում նշում առ այն, թե որքան արժեքի գույքն է բավարար՝ ապահովելու արգելադրման նպատակները, այլ արգելադրվում է անձի անշարժ գույքն ամբողջությամբ, սակայն հարկ է նկատել, որ գույքի այն արժեքի նշումը, որը բավարար է արգելադրման

նպատակն ապահովելու համար, հանդիսանում է գույքի արգելադրման պարտադիր օրենսդրական պահանջ:

Հակառակ մոտեցման դեպքում ստացվում է մի իրավիճակ, երբ անձի անշարժ գույքը, որի շուկայական արժեքն էականորեն գերազանցում է անհրաժեշտ գումարի չափը, միջնորդությունը բավարարվելու դեպքում արգելադրվելու է ամբողջությամբ, այլ ոչ թե ենթադրյալ հանցագործությամբ ստացված գույքի, նշված դեպքում մեկ միլիոն ՀՀ դրամի չափով, ինչը կհանդիսանա անձի սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակում:

Այս հարցի վերաբերյալ լինում են հակառակ փաստարկներ առ այն, որ *գույքն արգելադրելու մասին որոշմամբ և դատարան ներկայացված միջնորդությամբ հստակեցվել է արգելադրվող գույքի այն արժեքը, որը բավարար է գույքի արգելադրման նպատակներն ապահովելու համար*: Այս առնչությամբ գտնում ենք, որ նշյալ փաստարկը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից: Այսինքն՝ նշված իրավիճակում մեկ միլիոն ՀՀ դրամ գումարի բռնագրավումն ապահովելու անհրաժեշտության մասին որոշման պատճառաբանական մասում շեշտադրելն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, և այդտեղ նշելը վարույթն իրականացնող մարմնին չի ազատում որոշման եզրափակիչ մասում արգելադրման նպատակն ապահովելու համար արգելադրման ենթակա գույքի արժեքը բավարար չափով նշելու պարտականությունից: Նշվածը բխում է նաև այն մոտեցումից, որ դատավարական ակտի եզրափակիչ մասը չի կարող չբխել պատճառաբանական մասի բովանդակությունից, առավել ևս, երբ այն օրենսդրական պահանջ է և ունակ է առաջացնել կոնկրետ իրավական հետևանքներ:

Հետևաբար, բռնագրավման ենթակա գումարի չափի մատնանշումը պետք է կատարել ոչ միայն որոշման պատճառաբանական մասում, այլև այդ որոշման «Որոշեց» հատվածում՝ ապահովելով մի կողմից իրավական որոշակիությունը (ի թիվս այլնի, նաև Կադաստրի կոմիտեի համար և հետագա հնարավոր բռնագրավման ժամանակ), մյուս կողմից՝ որոշման տրամաբանական կապը, պատճառաբանական և եզրափակիչ մասերի համարժեքությունը:

Եզրակացություն

Անձի սեփականության իրավունքի՝ որպես սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակումը պետք է լինի օրինական և համաչափ, այսինքն՝ ապահովի վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների օրինական շահերի ողջամիտ հավասարակշռություն: Հակառակ մոտեցումը կարող է ոչ միայն վտանգել պետության իրավական անվտանգությունը, այլև հանցավորության դեմ պայքարի և հանրային շահի պաշտպանության իրավաչափ նպատակների անվան տակ հանգեցնել անձի սեփականության սահմանադրական իրավունքի էության խաթարման:

Ըստ այդմ, ներկայացված հոդվածում կատարված վերլուծության արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները՝

1. Բոլոր այն դեպքերում, երբ 1998 թվականի հունիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում և դրանով նախատեսված ընթացակարգերով անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշում է կայացվել, ապա այդ որոշումը պետք է բողոքարկման ենթակա լինի նաև 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ինչ վերաբերում է բողոքարկման իրավունքի իրացման կառուցակարգին, ապա գտնում ենք, որ այդպիսի որոշումը կարող է բողոքարկվել 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչդատական ակտերի իրավաչափության դատական երաշխիքներ) կամ 294-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքներ) շրջանակներում:

2. Բռնագրավման ենթակա գումարի չափի մատնանշումը պետք է կատարել ոչ միայն որոշման պատճառաբանական մասում, այլև այդ որոշման «Որոշեց» հատվածում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով
Constitution of the Republic of Armenia, 2015.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 2021 թվականի հունիսի 30-ին
Criminal Procedure Code of RA, 30.06.2021.
3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա՝ ընդունված 1950 թվականին
European Convention on the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 1950.
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:
Borzhonov v. Russia case of ECHR, 22.01.2009, p. 59-60.
5. Վճռաբեկ դատարանի՝ Ա. Հայրապետյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԾԴ/0001/11/10 որոշում
Case number ԵԾԴ/0001/11/10- Cassation Court of RA.
6. Վճռաբեկ դատարանի՝ Ա. Սեկոյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշում:
Case number ԵԿԴ/0185/11/11 - Cassation Court of RA.

Karen Amiryan

*Judge of the Anti-Corruption Court of Appeal of the Republic of Armenia,
Ph.D. in Law, Associate Professor at the Chair of Theory and
History of State and Law of Faculty of Law of Yerevan State University*

SOME KEY ISSUES FOR UNDERSTANDING AND INTERPRETING CRIMINAL PROCEDURE REGULATIONS LLIMITING THE PROPERTY RIGHTS¹

Abstract

The purpose of the article is to analyze a number of issues related to the legitimacy of restrictions on property rights as prescribed by the Criminal Procedure Code of the Republic of Armenia. The article refers to a number of regulations related to the material grounds and procedures for imposing attachment on the assets as prescribed by Chapters 15 and 39 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia dated June 30, 2021, which are perceived and interpreted in different ways. In other words, the article aims to present the issues that have arisen in law enforcement practice. In this sense, the article is also relevant, since the presented approaches may be of interest to the students, lawyers, law enforcement authorities, and judges.

The article discusses issues such as the lifting of attachment from the assets under the current Criminal Procedure Code of the Republic of Armenia which had been imposed under the previous Criminal Procedure Code of the Republic of Armenia, as well as the indication about the sufficient value of the assets in the decision on imposing an attachment on the assets.

The first part of the article is devoted to a number of issues related to the legality of decisions on the recognition of property of alleged criminal origin as material evidence, which law enforcement practice faces. *(The first part of the article will be published in the journal Bulletin of Jurisprudence of Yerevan University).*

Keywords: right of ownership; limitation of right of ownership; judicial guarantees; prohibition of property; lifting attachment from the assets; determining the value of the assets subject to attachment.

¹ The article was presented on 29.03.2024 and was reviewed on 10.06.2024.

Карен Амирян

*Судья Апелляционного антикоррупционного суда Республики Армения,
к.ю.н., доцент кафедры Теории и истории государства и права
юридического факультета Ереванского государственного университета*

НЕКОТОРЫЕ ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ДЛЯ ПОНИМАНИЯ И ТОЛКОВАНИЯ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫХ НОРМ, ОГРАНИЧИВАЮЩИХ ПРАВА СОБСТВЕННОСТИ¹

Абстракт

Цель статьи – проанализировать ряд вопросов, связанных с законностью ограничения права собственности, предусмотренного Уголовно-процессуальным кодексом Республики Армения. В статье делается обращение на ряд регулирований, связанных с материальным основанием и процессуальным порядком наложения ареста на имущество, предусмотренных главами 15 и 39 Уголовно-процессуального кодекса Республики Армения от 30 июня 2021 года, которые воспринимаются и интерпретируются различным образом. Иными словами, в статье рассматривается цель представления проблем, возникших в правоприменительной практике. В этом смысле статья также является актуальной, поскольку представленные подходы могут заинтересовать как студентов, так и юристов, сотрудников правоохранительных органов и судей.

В статье рассматриваются такие вопросы, как снятие в условиях действующего УПК РА ареста с имущества, наложенного в условиях предыдущего УПК РА, отметка в постановлении о наложении ареста на имущества о достаточной стоимости имущества.

Первая часть статьи посвящена ряду вопросов, связанных с правомерностью решений о признании имущества предполагаемого преступного происхождения вещественным доказательством, с которыми сталкивается правоприменительная практика (первая часть статьи будет опубликована в журнале «Вестник юриспруденции Ереванского университета»).

Ключевые слова: право собственности; ограничение права собственности; судебные гарантии; арест имущества; снятие ареста с имущества; определение стоимости наложенного под арест имущества.

¹ Статья была представлена 29.03.2024 и прошла рецензирование 10.06.2024.